

ցեալ տարւոյն (1872) վերջերը . մէկն կոչեցաւ Գոնկոյ-Լիվինկսդոն , վասն զի Ափրիկէի արեւմտեան կողմէն՝ Գոնկոյ գետոյն բերանէն կամ քովերէն պիտի յառաջ խաղար , անոր և Լուալապա գետոյ ընթացքը քննելու . Պ . Եունկ՝ բարեկամն Լիվինկսդոնի՝ 2000 լիրա ստեռլին նուիրեց այս ընկերութեան : Իսկ միւս ընկերութիւնն Գամերոն և Պարդըլ գիտնականաց առաջնորդութեամբ՝ արեւելեան Ափրիկոյ Զանզիպարի կողմերէն յառաջ պիտի երթայ՝ խորերը քննելու : Երկու ընկերութիւնք ալ նոյեմբերի վերջերը ճամբայ ելան , և հիմայ անշուշտ կը դեգերին այն կողմերը : — Գերմանացիք ալ ունին գիտնական խնդրակներ ՚ի միջին Ափրիկէ , որոց օգնութեան համար անցեալ տարի մնայուն ժողովք մը հաստատեցին ՚ի Պեռլին . իրենց մասնաւոր նպատակն է արեւմտեան կողմերը քննել հիւսիսային լայնութեան 5 աստիճանէն՝ հարաւային 5 աստիճանի միջոց :

ԲԵԻԵՌԱՅԻՆ ՆՈՐ ՈՒՂԵԻՈՐՈՒԹԻՒՆՔ

Երկրիս բևեռային կողմերու ծանօթութեան փափագն և քննութիւնն նոր չէ , բայց աւելի մեծ ջանքով և հնարքներով քննելն՝ 8 կամ 10 տարիէ վեր է . յորում ամեն մեծ և նաւազօր ազգք խնդրակներ և քննիչներ խաւրած են կամ պատրաստուեր են խաւրել հիւսիսային բևեռին սահմանները . Անգղիացիք , Ամերիկացիք , Փռանկք , Շուետք , Ռուսք , Գերմանացիք և Աւստրիացիք : Ետքիներս՝ որ ծովային զօրութեան մէջ նորընծայ կրնան ըսուիլ՝ գիտնականութեամբ թերևս քան զբազում ազգս և քննողս առաւելեալ են , անոր համար իրենց նուիրակքն ալ աւելի ուսումնական քննութիւններ ընելու պատրաստուեր էին քան աշխարհագրական գիւտեր , թէ և հասարակաց գլխաւոր հետաքննութիւնն է գտնել կամ գիտնալ թէ երկրիս մինչև ցարդ անմեր-

ձենալի եղած երկու ծայրերն , (և մասնաւորապէս հիւսիսայինն՝ որուն կրցեր են աւելի մօտենալ ,) ինչ գաղտնիք ունին . արդեօք ցամաք երկիր կայ ինչուան 90°, որ է ըսել ծայր կամ բևեռ երկրագնտիս , թէ ովկիանոս ծովն է շրջապատ . և եթէ ծով է՝ արդեօք մըշտընջենաւոր սառամանեօք կարծրացեալ է , եթէ լոյծ և արձակ մասեր ունի , գոնէ տարւոյն տաք եղանակին : — Ինչուան հիմայ եղած բազմավտանգ և բազմածախ նաւարկութիւնք և հետազօտութիւնք՝ չկարցան լուծել այս տարակոյսները . դեռ խորհրդաւոր ծածկոյթ մը կայ բևեռաց ծայրը . գրեթէ 82 աստիճանէն վեր անցուած չէ , միով բանիւ ոչ դք յաջողեցաւ գլխաւոր դիտմանը . այլ գոնէ երկու մեծ վաստակ եղան : Մէկ մը՝ նորանոր ծանօթութիւնք այն հեռաւոր կողմերուն , թէ ծովուն յատկութեանց , թէ մերձաւոր ցամաքաց ձևերուն , ինչպէս են Սբիցպէրկ , Կրենլանտիա , Նոր Զեմլեա , և այլն , և ասոնց եզերաց բնութեան , թէ ծովային և ջրափնեայ կենդանեաց , թէ բուսական աշխարհի , թէ ուրիշ բնական երևութից , ինչպէս հիւսիսայգն , մագնիսութիւնն , և այլն : Երկրորդ , որ աւելի պատուականն է , ընդարձակութիւն ջանից և գիւտից հանճարոյ , որ է ըսել մարդկային կարողութեան , բնութեան դժուարութեանց դէմ մրցելու , և դիւրացուցիչ հնարքներով իր նպատակին դիմելու : Ասով է որ յետ այնքան անյաջող փորձից ալ առջիներէն աւելի ջանքով և յուսով նորանոր հետազօտութիւնք կ'ըլլան և կը պատրաստուին , և դեռ անփորձք ալ ՚ի փորձ կը մտնեն :

Այս ետքիներէս էր Աւստրիա , ինչպէս վերը յիշեցինք , որ հազիւ երկու տարի յառաջ հրաւէր մը կարգաց իրեններուն բևեռախնդիր խուզարկութեան , տէրութեան գանձէն գումար մը նուիրելով , որուն վրայ կամաւոր նուէրքներ ալ ժողովելով՝ քիչ ատենի մէջ իբրեւ կէս միլիոն ֆրանգ հաւաքուեցաւ : Պրեմէնի նաւահանգիստը 220 տակառաչափի և 86 ձիու ուժով շոգենաւ մը

պատրաստուեցաւ Դեկտրոֆ անուանե-
լով, և յանձնեցաւ յառաջնորդութիւն
Վէյքրեհզ և Բայէր (Weyprecht, Payer)
գիտնոց և նաւորաց. որք տարի մ'ա-
ռաջ ալ, այսինքն 1871^ն յունիսէ մին-
չև հոկտեմբեր ամիս նաւարկեր էին
Սբիցպերկի և Նոր Զեմլեայի միջոց. հի-
մայ իրենց երեք տարուան պաշար
տրուեցաւ, (բայ 'ի ածուխէ), և ան-
ցեալ տարի (1872) յունիսի 13^ն ճամ-
բայ ելան: Աւստրիական նաւորաց նը-
պատակն էր տարի մը դարձեալ լաւ մը
քննել իրենց նախածանօթ Սբիցպեր-
կի և Նոր Զեմլեայ միջածովը, և ձմե-
րել Զելիուպին կամ ըստ Ռուսաց Սե-
վերոյ Վոստոքնոյի ըսուած հրուանդա-
նին մօտերը, որ է 'ի ծայր սիպերիա-
կան ցամաքին, իբր ընդ 77½ աստիճա-
նաւ լայնութեան. կամ ուրիշ յարմար
տեղ մը: Երկրորդ տարին պիտի քն-
նէին այս հրուանդանին և Նոր Սիպե-
րիա ըսուած կղզեաց միջոցը. յաջորդ
տարին ալ Նոր Սիպերիոյ և Պերինկայ
նեղուցին միջոցը, յորում է երկիրն
Վրանկէլեան, այսպէս կոչուած յանուն
նշանաւոր Ռուս Վրանկէլ նաւապետի՝
որ գտաւ զայն յամի 1821:

Իրենց գլխաւոր ստուգելիքն է՝ թէ
Ասիոյ և Ամերկոյ ճանչցուած ցամաքէն
անդին եղած սառուցեալ ծովէն անդին
ալ՝ լոյծ և արձակ ծով կայ դէպ 'ի
բևեռ. և որովհետև յետ Վրանկէլի
այս կողմերս նաւարկող չէ եղած, այս
բանս ստուգելն ալ մեծ բան պիտի հա-
մարուի: Ի Պրեմայ մինչև 'ի Դրոմսէօ
(Tromsø) 'ի ծայր Նորուեկիոյ՝ յաջորդու-
թեամբ հասան 'ի սկիզբն յուլիսի. ամ-
սոյն կիսուն անկէ նաւեցին, և երբ հա-
սան 74½ լայնութեան տակ՝ անսովոր
սառոյցներու պատահեցան. այլ դեռ
առաջ գացին, ինչուան Նոր Զեմլեայի
ափունքը, յ' 3 օգոստոսի. անկէ ալ քա-
նի մ'օր սառերը ճղքելով հասան 'ի
Նասսաւ հրուանդանն (յ' 13 օգոստ.),
ուր ծովն բոլորովին սառած՝ արգիլեց
զնաւը. ինչպէս որ քանի մը շաբաթ ա-
ռաջ եկած ծովու հորթ որսողաց նա-
ւերն ալ խորտակեր էր: Քանի մը շաբ-

թէն եղանակն քիչ մը թուլնալով՝ Դեկե-
թոֆ նաւն կրցաւ շարժիլ և երթալ ին-
չուան 'ի ծովածոցն Բեչորայ գետոյ. ուս-
կից իրեն օգնական նաւն յետ դարձաւ.
և Լարոնիոյ Համմէրֆէսդ աւանէն սեպ-
տեմբերի 20^ն հեռագրաւ ծանոյց զայս:
Այս երկրորդ նաւն (Isbjirn) որ տարի
մ'առաջ ելեր էր այն կողմերը քննու-
թեան՝ օգոստոսի 12^ն հանդիպեր էր
Դեկեթոֆի և մէկտեղ երկրորդ օրը
հասեր էին 'ի Նասսաւ, 76½ լայնու-
թեան տակ:

Ամերիկացւոց վերջին բևեռախնդիր
նաւարկողն է Հօլ (Hall) նաւապետն,
որ գրեթէ տասն տարի է վարժեր էր
այն հիւսիսային կողմանց, և Եսկիմա-
ցւոց բնակակցութեան իր նպատակն էր
ինչուան բևեռը երթալ, Սմիտհի նեղու-
ցէն անցնելով 'ի ծովն Պաֆֆինի. ինքն
ալ նման շատերուն (որոց գլխաւորն
է Բեդերման կոթացի աշխարհագէտն),
կարծէ որ բևեռին վրայ ծովն արձակ
պիտի ըլլայ և չորս դին սառնապատ պա-
րիսպ մը. դժարութիւնն այս պարըս-
պէն անցնիլն է. որոյ համար ինքն ա-
ռած էր իր մեծ Բևեռակաւ (Polaris)
կոչած նաւուն հետ՝ մանր նաւակներ և
բալիսիրներ ալ, ըստ պիտոյից տեղոյն
և եղանակին գործածելու. երկու տա-
րուան համար ալ պաշար: Յամին 1871
յունիսի 26^ն ելաւ Հօլ 'ի Նոր Եօթայ
իրեւ 40 ընկերակցօք. օգոստոսի 24^ն
կը գրէր 'ի Թէսսիուսաքայ, որ է վեր-
ջին բնակարան Դանեաց 'ի Կրենլան-
տիա, 73° 24' լայնութեան տակ. ուսկից
պիտի մտնէր անծանօթ ծովու կողմեր
դէպ 'ի արևմտեան հիւսիս երթալով:

Այս թուականէն ետև շատ ատեն
անցաւ առանց լուր մը հասնելու Հօլի
նաւարկութեան վրայ, երբ տարւոյս
(1873) ապրիլի վերջի օրը ուրիշ նաւ մը
բևեռային կողմերէն անցնելով Նոր Եր-
կրի (Զեմլեա) եզերքը՝ Ռոպերդի ըսուած
գոգոյն սառնակուտի մը վրայ հանդի-
պեցաւ 17 անձանց, որոց 9 Եսկիմա-
ցիք էին. ամենքն ալ ցուրտէ, անօթու-
թենէ և յոգնութենէ լկուած, որոց

մէջ էին Հօլի Բեռնական Նաւուն Նաւապետն Դայսոն և Մէյէր բնագէտն, և ըսին թէ այն սառներու մէջ մնացեր էին 197 օր: Ասոնք պատմեցին որ Նախընթաց (1871) օգոստոսի վերջը՝ Հօլայ հետ անցեր էին Սմիտհի նեղուցէն, Կրենլանտիոյ արևելեան հիւսիսային եղբորը պատելով, ինչուան ուր որ ֆէյն և Հայէզ (Kane, Hayes) Նաւապետը տասն տարի առաջ գացեր էին. և լայն կեկ ծովագողի մը հանդիպելով բեռնական (Polaris) անուանեցին զայն ալ, որ երթալով կը նեղնար և ջրանցք մը կը ձևանար, զոր և անուանեցին Ռոպըսոն (Robeson's Channel). և ասոր մէջէն երթալով ինչուան $82^{\circ} 16'$ լայնութեան տակ՝ արգիլուեցան սառոյցէն. թէպէտ հեռուն մէջ երևելով կարծեց Դայսոն թէ արձակ ծով ըլլայ իբրև 80 կամ 90 մղոն տարածութեամբ, դէպ 'ի հիւսիս և արևմուտք ալ՝ ցամաք երկիր, ուր կ'ուզէր երթալ Հօլ. բայց Նաւապետն Պրատինկըըն դէմ կեցաւ, և հարկ կը սեպէր ետ դառնալ ձմերել Հօլի կամ Ֆուլքը ըսուած Նաւահանգիստը, $78^{\circ} 20'$ լայնութեան տակ: Ասկէ հակառակութիւն և վէճ ելաւ մէջերնին. վերջապէս քիչ մը յետ դարձան՝ իրենց անուանած Polaris գողը ձմերելու, $81^{\circ} 38'$ լայնութեան տակ: Այսքան հիւսիսային կամ բեռնի մօտ տեղ դեռ մարդ ձմերած չէր. և սակայն ցուրտն կարծածնուն չափ սաստիկ չգտան. ասկէ առջի եղած Նաւարկութիւնք ալ ստուգեցին որ սաստկագոյն ցուրտն բեռնի մօտագոյն մասին վրայ չէ, այլ իբր 15 կամ 20° անկէ վար: Ամենէն սաստիկ ցուրտն եղաւ մարտ ամսոյն մէջ, 40° զրոյէն վար մնաց օրերով, անդամ մ'ալ ինչուան 58° իջաւ. և սառած սնդկի գտնականերով երկու մատնաչափ թանձրը փայտեր ծակեցին: Մայիսի մէջ տաքն սկսաւ ազդել. յունիսի՝ ծովագողին ամիունքն զերծան սառերէ, և բարակ խոտերով ծածկուեցան, ուրմէկահոտ արջառք երեցան արածուող, որոց մէջ 40 հատ մը զարկին Նաւաստիքն: Յետոյ երեցան ուրիշ կենդանիք ալ,

ճագար, կղնաքիս, ջրային թռչունք, և նաև Եսկիմացուոց նշաններ:

Ըստ պատմելոյ սառին վրայ գտուած անձանց՝ առջի տարին (1871) հոկտեմբերի մէջ Հօլ ուզեր էր բալխիրով յառաջ երթալ դէպ 'ի բեռն, և ինչուան $82^{\circ} 16'$ հասնելով՝ հիւանդացեր և յետ դարձեր էր, և քիչ ատենէն մեռեր նոյեմբերի ութին: Հիւանդութեան տեսակին վրայ այլ և այլ կարծիք տալով կասկած ծագեցաւ թէ թունաւորած կամ բռնի մեռած ըլլայ. և թէ Նաւաստեաց մէջ երկպառակութիւն ընկած էր, ոմանց ուզելով առաջ երթալ, ոմանց յետ դառնալ: Երկրորդ տարին օգոստոսի մէջ հազիւ ազատեցաւ Բեռնական Նաւն սառերէն, և սկսաւ դառնալ դէպ 'ի հարաւ. բայց այնչափ զարնուեցաւ ծփացող սառերու՝ որ հարկ եղաւ բեռանց և պաշարի մէկ մասը թափել՝ սաստիկ մըրրկի մ'ատենն 'ի 15 հոկտեմբերի (1872). և մինչ Նաւաստեաց մէկ մասն սառին վրայ էին՝ սառերն ճղբուելով զանոնք քշեցին հեռուն, նաւն ալ հակառակ կողմ քշեցին և մըրրկի ու միգի մէջ ծածկեցին. անոր մէջ 16 անձինք մնացեր էին, որք վտանգին ատեն ջրհաններով ջուրը պարպելու կ'աշխատէին. և որովհետեւ մակոյկներն ալ կորուսեր էին՝ վախ կար որ իրենք ալ կորած ըլլան Նաւուն հետ. իսկ եթէ բաղդով մը Նորթհրմպէրլէնտ կղզին հասած ըլլան՝ կրնան հոն ձմերած ըլլալ և թերևս դեռ կը սպասեն օգնութեան:

Իսկ Դայսոնի հետ սառին վրայ մնացողը՝ թէպէտեւ մակոյկ ալ պաշար ալ ունէին, բայց ընտրեցին սառերու վրայ ծփալով բաղդը փործել. պաշարնին կը ճարէին՝ արջեր, ծովային հորթեր և թռչուններ որսալով. իրենց տակի կըղզիաձև սառնակոյտն որ առաջ հինգ մղոնի չափ տարածութիւն ունէր, նուազելով 60 մեղրաչափ մնաց. անոր համար աշխատեցան ուրիշ սառնատախտի մը վրայ անցնիլ, տարւոյս ապրիլի մէկին. բայց անցնելու ատեն՝ զգեստներուն, գործեաց և պաշարին մէկ

մասն մնաց առջինին վրայ: Իրենք ալ երկու օր աշխատելով հազիւ կրցան մակոյկնին քշել և հասնիլ նոր սառին, որ կուտրտելով չթողուց որ ալ մակոյկ գործածեն. կերակուրնին ալ հատաւ. ծովային հորթք չէին երևեր. միայն ապրիլի 21^ն արջ մը բռնեցին: Անկէ վերջը երբեմն սառներու վրայ, երբեմն մակուկով ջրոց վրայ երթալով կը ջանային դէպ յարեմուտք լապրատորի եղերքը հասնիլ. և ահա այս աշխատութեանց մէջ հանդիպեցան ապրիլի 30^ն զիրենք ազատող նաւուն (որ կոչուէր Tigresse, Մատակ — վագր):

Դայսոնի և ընկերացը պատմածնէրուն վրայ՝ առաջ շատ տարակոյս եղաւ, և անհաւատայի կ'երևէր որ այնպիսի փիճակի մէջ 200 օրուան չափ կարենան դիմանալ. մանաւանդ որ երկուքն Եսկիմացի կին և հինգն տղայք էին. սակայն երթալով տարակոյսներն կը ցրուին, միայն բեռնական նաւուն ինչ ըլլալը կամ ուր մնալը կը փափազին ստուգել Ամերիկացիք:

Շուետք որ երկրաւ մօտադոյն են բեռնային սահմանաց, ետքի տարիներս շատ նաւարկութիւններ րրին դէպ յայն կողմն, Նորտէնսքեօլտ (Nordenskjöld) հմուտ երկրաբանին առաջնորդութ. որ վեցերորդ անգամ անցեալ տարի յուլիս 21^ն ելաւ 'ի Դրոմսէօէ երեք նաւով. գլխաւորն՝ երկաթէ շոգենաւ մ'էր Բոլնէմ անուանեալ, երկրորդն՝ առագաստաւոր պրիք մը կլաւուսն պաշարակիր, երրորդն՝ շոգենաւ մը Ադուս կոչեցեալ, նոյնպէս պաշար և գործիքներ կրող. որոց մէջ 60^ն աւելի անձինք կային, այլ միայն 21 հոգի պիտի ձմերէին մեծ նաւուն մէջ: Իր նպատակն էր նախ քննել Սբիցպերկի արևելեան կողմերը, ապա ուղղակի դէպ 'ի հիւսիս դէպ 'ի բեռն երթալ, ծովու և սառերու վրայով. վասն զի ինքն Բեդերմանի կարծիքէն չէ, այսինքն չի համարիր որ բեռնին մօտերն արձակ և ընդարձակ ջուրք ըլլան. այլ կը յուսար սառերու վրայ բալխիրով սահելով գոնէ

85° լայնութեան հասնիլ: Բայց անցեալ տարուան բեռնային ձմեռն կարգէ դուրս ցուրտ ըլլալով՝ արդիւնց Շուետաց նաւերն ալ Սբիցպերկի եղերքը, սեպտեմբեր ամսոյ սկիզբները. ուստի հարկ եղաւ որ իրենց պատրաստած փայտէ տնակը հօն կանգնեն և ձմերեն: Յաջորդ ամսոյն մէջ ցուրտն աւելցաւ, ինչուան 27 աստիճան զրոյէ վար, բայց միջին հաշուով — 42° կամ 43°. հոկտեմբերի 20^ն արեգակն բոլորովին աներեւոյթ եղաւ, մէկ մ'ալ չորս ամէն վերջն երևնալու համար: Նոյեմբերի մէջ ցուրտն նուազեցաւ, ինչուան երբեմն զրոյէն 20½ վեր ելաւ բարեխառնութիւնն. և ինչուան փետրուար ամիս տեղ տեղ ազատ ծով կ'երևէր: Յետ սաստիկ ցրտոյ դեկտեմբերի, յանուարի մէջ եղանակն կակրղնալով Շուետք յոյս առին նաւելու. բայց հազիւ ճամբայ ելան՝ սաստիկ փոթորիկ մը զիրենք մղեց 'ի ցամաք. նաւաց մէկուն ղեկն ալ կոտրելով՝ աւելի մեծ վտանգի ալ վախկար. բայց յանկարծական սաստիկ ցրտութիւն մը ալիքները կապեց, ծովը սառեցուց: Դարձան նորէն իրենց փայտէ տունը հանգչելու և պատսպարուելու. քիչ ատենէն նորէն արձրկուեցաւ ծովն. ալիքներն խաղալ սկսան. նաւորդք նորէն կը պատրաստուէին ճամբու. և ահա դարձեալ կապուեցաւ խրտացաւ ծովն, և անանկ թանձր սառով՝ որ քիչ օրէ լուծուելու յոյսն ալ փճացուց. հարկ եղաւ նոր եղանակի սպասելու: Փետրուար ամիսն սաստիկ ցուրտ եղաւ, սովորականն էր — 46° բէօմ. ինչուան 30° ալ իջաւ: Միայն թէ ամսոյն 21^ն նորէն արևուն երևնալն մխիթարեց սառի և խաւարի մէջ արգելաւորները. որոնք այս երկար զիշերը ուսումնական քննութեամբք օգտակար և զուարճալի ըրին. մասնաւորապէս դիտեցին որ հիւսիսայգն սովորաբար հարաւային հովերու փչած ատեն կ'ըլլար, և այնքան թանձր կամ լուսաւոր չէր՝ ինչպէս աւելի հարաւային կողմեր, որով հետեցուցին թէ աւելի ալ նօսր պիտի ըլլար բեռնին մօտերը: Լուսոյ

բեկբեկման, մթնոլորտի ելեկտրութեան, ծովուն ջրոց տեղատուութեան վրայօք ալ կարևոր քննութիւններ ըրին: Թէ սառին և թէ ծովուն լոյծ յատակէն բոյսեր հանելով՝ 30 տեսակ մուռ և լոռքնեց ֆիէլման բուսաբանն՝ որ եկեր էր Սբիցպերկի բոյսերը քննելու համար, և շատ զարմացաւ երբ զրոյէ վար երկու աստիճան ցրտութեան և ամսօրեայ մթութեան մէջ աճուն և պտղաբեր ջրի մուռեր գտաւ: Ալ աւելի զարմանալի եղան այսպիսի հանգամանաց մէջ գտուած ծովային կակղամիս կենդանիք. և բաց օդու մէջ — 10° ցրտութեան տակ ապրող և սերող կենդանիք: Մէկ նշանաւոր երևոյթ մ'ալ եղաւ ծովեզերքը քալած ատեննին՝ կոխուած տեղերուն լուսաւորիլը, որ առաջ վախալ պատճառեց նաւաստեաց. բայց այն տեղերու ձիւները ժողովելով և քննելով՝ գտան բազմութիւն մանրիկ կճեպաւոր փոսփորային կենդանեաց, որք այն ցուրտ կլիմային տակ միլիոնաւոր կ'ապրին, և թուի թէ ծովու ջրով խոնաւացեալ ձիւնը կը սիրեն: Իսկ մեծ կենդանիք և թռչունք որք ամառը կու գան այս կողմերս՝ այն ձմեռուան մէջ բնաւ չերևցան, և ոչ իսկ Դերհիշսիսային Լակոպ (Lagopus hyperboreus) ըսուած թռչունն, որ սովորաբար չի հեռանար այսպիսի տեղուանքէ:

Դեռ շատ զարմանալի և հետաքննելի բաներ ալ դիտեցին և նշանակեցին Շուետք այս կարճ նաւագնացութեան ատեն, որ քիչ ատենէն կրնայ հռչակուիլ. վասն զի չկարծուած ժամանակ տարւոյս յուլիսի 5^{էն} Պարոն Նորտէնս. քեօլտ Դրոմսէօ դարձաւ իր ընկերներովը, դեռ յայտնի չէ ինչ պատճառաւ, այլ յայտ է որ բուն նպատակին չհասաւ այս անգամ ալ: — Բայց սառերու մէջ բռնուած ըլլալը շուտով իմացուեցաւ՝ անով, որ ոչ հետն եղած երկու օգնական նաւերն և ոչ ալ վեց ձկնորսի նաւեր՝ որ նոյն կողմերը գացեր էին՝ յետ դարձան որոշուած ժամանակը, որ էր սեպտեմբերի կամ հոկ-

տեմբերի մէջ. անոր համար Շուետք ուղեցին անոնց օգնութիւն դրկել. և այս անգամ Նորուեկիացիք պատրաստեցին Ալպերդ շոգենաւը, որ յաջող նաւարկութիւն մ'ըրած էր քանի մը տարի առաջ Սբիցպերկի և Նոր Զեմլեայ միջոցը. Ոթոն կամ Օթթոյնաւ պետին յանձնելով, 35 ընկերօք և շատ պաշարով, մասնաւոր ալ հրաձիգ գործեօք և վառելեօք, որպէս զի կրակով նշան տալով իմացընեն իրենց գալը: Նոյեմբերի 11^{էն} ճամբայ ելան ի Թէօնսպէրկէ, և 18^{էն} հասան ի Դրոմսէօ. քանի մ'օրէն անկէ նաւելով դէպ ի հիւսիս՝ հանդիպեցան յիշեալ 6 ձրկն. որսի նաւերէն երկուքին, որոց չորսին ալ սառերու մէջ պաշարուած ըլլալն իմացան, նոյնպէս Բոլհէմ Շուետաց նաւուն ալ Մօսսէլ ըսուած ծովածոցին մէջ ըլլալը, և շուտով լուր հասուցին ի Դրոմսէօ պզտիկ շոգենաւով մը:

Այս մեծ նաւարկութիւններէն զատ առանձին կամ փոքր նաւարկութիւնք ալ եղան բեռային կողմերը. որոց նշանաւորէն մէկն է Էլլինկ Գարլսէն Նորուեկիացւոյն, որ յամի 1871 Նոր Զեմլեայ հիւսիսային արեւելեան ծովեզերքը 76° 7' լայնութեան տակ գտաւ այն փայտէ տունը՝ զոր 275 տարի առաջ (1596-7) քաջանուն Պարէնց Հոլանտացի նաւապետն կանգնեց էր. և այսքան երկար ժամանակ անայցելու և ամենեին անաւեր ու նոր մնացեր էր: Գարլսէն շատ հետաքննական բաներ գտաւ այն յիշատակաց արժանի տան մէջ և բերաւ, զոր Հոլանտացիք իբրեւ ցանկալի նշխարներ ստացան. այսպիսիք են ժամացոյց մը, գրքեր, Պարէնցի սրինգը, և այլն:

Անդղիացիք որ ծովային խուղարկութեանց մէջ առաջինք եղած են, և նոյն իսկ բեռախնդիր նաւարկութեանց մէջ, թէ և այս ետքի տարիներս նոր ընթացք մը չըրին, այլ 1865^{էն} իրենց աշխարհագրական ընկերութեան նախագահն, հռչակաւորն Մըրչիսըն, ա-

առաջարկեց տէրութեան նոր փորձ մ'ալ
ընելու: Տէրութիւնն սուրբ սպասել,
Գերմանացւոց (Բեդերմանի խրատով)
և Շուետաց նաւարկութեանց ելքը դի-
տելով. հիմայ որ ասոնց կրկին և կրկին
փորձերն անյաջող ելան, Օղպոռն նա-
ւապետն կ'առաջարկէ թողուլ անոնց
փրնտաւած ճամբան, որ է Սբիցպերկի,
նոր Չեմլեայ և կրենլանտիոյ միջոցը, ուր
միշտ ծովը սառուցեալ և արգելք գտան,
և փորձել կրենլանտիոյ ափունքը. որ
ցամաք գետին ըլլալով աւելի դիւրու-
թիւն կ'ընծայէ ճամբու, մանաւանդ որ
ատլանդեան ծովայորձանք մ'ալ կ'իջնէ
անոր արևելեան եզերքներէն, և կը
յուսացընէ որ դէպ 'ի հիւսիս դեռ շատ
վեր երկնցած պիտի ըլլայ այն երկիրը,
որուն ինչուան հիմայ ծանօթ ամենէն
հիւսիսային մասն ալ 600 մղոնի չափ
լայնութիւն ունի. մեծ վաստակ մը կ'ըլ-
լայ այս երկրին անծանօթ եզերքները
քննել, և անոնցմէ չհեռանալով դէպ
'ի հիւսիս ելնել, ու բալխիրներով չորս
կողմը զննել, և գտնել անտառներ, որ
ըստ յուսոյ ոմանց ինչուան բւեռին մօտ
սահմանները պիտի գտուին: — Օղպոռ-
նի առաջարկութեան հաստատութիւն
կամ վճիռ տրուած չէ. բայց կը յուսա-
ցուի որ ուշ կամ շուտ 'ի գործ դրուի:

ԱԶԳԱՅԻՆ ՅԱՌՄԱՆԱԴԻՄՈՒԹԻՒՆ ՃԱՌՈՆԱԾ

Որչափ ցանկալի և կարևոր՝ այնքան և
հազուատես և զարմանալի բան մ'է
ազգի մը յանկարծ և քիչ տարուան
մէջ զարգացումն և յառաջելն 'ի քա-
ղաքականութեան և 'ի դիտութիւնս. և
թերեւս պատմութեան մէջ շատ քիչ
կամ հազիւ պատահած է ինչ որ եր-
կու կամ երեք տարիէ վեր կը լսեմք և
կը տեսնեմք ճաբոնաց վրայ. այն Ասիոյ
հին և ամենահին ազգաց մէկն, որ գրե-
թէ քան զամենքն ալ զատուած և մաս-
նաւոր դիրք մ'ունի, հին աշխարհին
ասիական մասին ամենէն արևելակող-

մը և մեծ ովկիանու անդրնդոց մէջ կըղ-
զիացեալ, ինչպէս եւրոպական մասին
արևմտագոյն կողմն ալ ատլանդեան
անդնդոց մէջ կըղզիացեալ է Անգղիա,
յառաջագէմն յարուեստս և 'ի վաճա-
ռականութեան նոր ազգաց: Այս ասիա-
կան նոր Անգղիայն՝ ճաբոն, որուն գրա-
ւոր պատմութիւնն կը սկսի Քրիստոսէ
եօթն դար առաջ, (ճիշդ այն ատեն որ
մեր հին Հայկազուն հարքն ալ բոլորովին
անկախ ինքնագլուխ տէրութիւն մը
կանգնեցին՝ Չարեհի և չորս յաջորդաց
առաջնորդութեամբ), 2533 տարուան
միջոց անընդհատ յաջորդութեամբ նոյ-
նացեղ ինքնակալներ ունեցեր է, որոց
այժմու պայազատն է 122 բորդ, սկսեալ
յառաջնոյն՝ 'ի 660 ամի նախքան ըզ-
թուական փրկչին: Յետ այսքան երկար
դարերու, որոց մէջ դանդաղ զարգացում
մ'ունէր, նման իմն Չինաց, անհաղորդ
ըլլալով կամ խիստ քիչ և ակամայ հա-
ղորդ՝ օտար ազգաց հետ, յանկարծ-
օրէն իմն և ոչ արիւնահեղ յեղափոխու-
թեամբ՝ փոխեց բազմադարեան և հնա-
պաշտ կանխակալ գնացքը և սովորոյ-
թը. որուն գլխաւոր պատճառ մ'ալ
համարուի՝ յետ քանի մը տարիէ վեր
Եւրոպացւոց հետ ունեցած յարաբե-
րութիւնն, Բարիզու աշխարհահանդի-
սին տեսարանը, յոր սրամիտ և սրա-
տես այցելութիւններն 'ի ճաբո-
նաց. և քննելով Եւրոպացւոց զար-
գացմունքն և առաւելութիւնները՝ ի-
մացուցին իրենց տէրութեան պաշտօ-
նէից և գլխաւորաց:

Ազգանախանձ անձինք իմացան որ
իրենց յառաջագիմութեան մեծ ար-
գելք է իրենց վարչութեան երկու զա-
նազան կերպարանք ունեցող պետաց
վրայ ըլլալն, որոց մէկն Թայքուէն կ'ը-
սուէր, և աւելի կրօնական համարուած
էր, միւսն Միգուտոյ՝ աշխարհական.
բազմութիւն մ'ազնուականաց ալ Տա-
յիմոյ կոչուած պայազատական և սե-
փական օրինօք՝ ազգային կամ իշխա-
նական ոյժը կը ջլատէին. եռանդեամբ
և ճարտարութեամբ այս արգելքները
վերուցին. ազգային վարչութիւնը կեն-